

Մարիամ վայրկեան մը յարգական սարսափով կը նայի Անոր, և երբ երկիւղով գետին կը ծռի, մարը մտնող արեւը իր շուքը կ'ուղղէ պատին դիմացը, ուր տեղւոյն հեծաններուն և գործիքներուն կ'օգնէ կազմելու յառաջիկայ խաչելութեան ներկայացումը: Ոսկեայ թագին շուքը կը ստանայ սրածայր փշեայ այս ակին երեւոյթը, մինչ գաւազանը կ'երեւայ իբր եղբրական գեղարգ և խնկամանը՝ նման այն ամանին որուն միջոցաւ պահապանները Անոր քացախ տուին խմելու համար (L. V. C. էջ 135-136):

դ) Բեքդեհեկի մանկանց խորանը. — Այրին արեւմտակողմը շատ խորաններ կան. զանց ընելով անոնց յիշատակութիւնը կը յիշենք միայն ներքնագոյն խորան մը յանուն Բեքդեհեկի մանկանց, որոնց մասին կը կարդանք Մատթէոսի Աւետարանին մէջ. «Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն որ էին ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմինից և ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն» (Բ. 16-17):

Մեր Յայսմաւուրքին համաձայն կոտորուած մանկանց թիւն է չորս հարիւր վաթսուն երկու առհասարակ Բեթղեհէմէն և շրջակայ ութսուն եւ չորս զիւղերէ: Ուրիշներ աւելի կ'ենթադրեն այս թիւը: Հնագոյն աւանդութեան մը համաձայն՝ սոյն նահատակուած մանուկներուն նշխարները թաղուած են այս խորանին տակ, և տարին մէկ անգամ կը բացուի անոնց զամբարանը: Մեր Մովսէս Կաղանկադուացիին հայ ուխտաւորն ալ կը վկայէ այս մասին ըսելով. «Եւ յայրիկ եկեղեցոյն մասունն, յորում մանկանցն ապանե-